

**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԿՈՆԳՐԱԿԸ ՔԱՐԼ (ԳԱԼՈՒՍՏ) ԵՎ ԷՄՄԱ ՍՈՂՈՅԱՆՆԵՐԻՆ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ» ԸՔԱՆՇԱՆՈՎ
ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ՍԻՐԵՅԵԱԼ ՋԱԿԿԱՅ ՄԵՐՈՅ ԵՒ ՀԱՐԱՋԱՏԻՑ
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԱՇՆԻ
ՏԷՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՔԱՐԼ (ԳԱԼՈՒՍՏ) ԵՒ ԷՄՄԱ ՍՈՂՈՅԱՆՆԻՆ
ՈՐ Ի ՏԻԹՐՈՅԹ, Ի ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՍ ԱՄԵՐԻԿԱՅԻ**

Մեզի համար հոգեկան ուրախութեան աղբիւր է եղած բազում տարիներէ ի վեր Ձեզ անձամբ ճանչնալ եւ առաջին իսկ օրէն զգալ ու տեսնել Ձեր մէջ ճշմարտօրէն քրիստոնեայ, ազնուական մարդկային արժանիքներով օժտուած եւ անհուն սիրով տոգորուած հայ մարդը, հանդէպ Հայց. Առաքելական մեր Ս. Եկեղեցիին, անոր Մայր Աթոռին՝ Ս. Էջմիածնին, եւ մեր նուիրական հայրենիքին՝ Մայր Հայաստանին:

Վերջերս տեղեկացանք Հայց. Եկեղեցւոյ պաշտօնական հիմնադրութեան 1700-ամեակի Գործադիր Մարմնի վարիչ-քարտուղար Գերշ. Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոս Աշճեանէն եւ Սիւնեաց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Արքահամ Եպիսկոպոս Սկրտչեանէն, որ դուք սիրայօժար կամքով յանձն առած էք ամբողջական բարերարութիւնը Վայքի մէջ կառուցուելիք եւ Ս. ՏՐԴԱՏ անունով ձօնուելիք նոր եկեղեցիին:

Թե՛ Ամերիկայի Սիացեալ Նահանգներու, թե՛ Հայաստանի եւ թե՛ աշխարհի այլազան վայրերու մէջ դուք բազում այլ բարերարութիւններ էք կատարած միշտ համեստութեան սքանչելի առաքինութեամբ եւ գոհաբերական ոգիով:

Ի գնահատութիւն Ձեր երկար տարիներու մատուցած քանկազին ծառայութեանց թե՛ Հայց. Եկեղեցիին եւ թե՛ հայ ազգին ու մշակոյթին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի առաջին կարգի շքանշանը՝

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻԶ:

Կ'աղօթենք առ Ամենակալն Աստուած, որ Ձեզի պարգեւէ երկար տարիներ առողջութեան բարիքներով, որպէսզի արդարօրէն եւ լիապէս վայելէք Ձեր բարերարութեանց արդիւնքները եւ տեսնէք Ձեր Եկեղեցիին եւ Ձեր Հայրենիքին ծաղկումը եւ բարգաւաճումը:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Ս. Հոգւոյն, եւ յաւետ օրհնեալ ի Մենք. Ամէն:

**ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուալ Կոնդակա ի 30 Մարտի
Յամի Shanon 1999 ի թուին Հայոց ՌեխԸ
ի Մայրապաճա Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ Է224